ՀՏԴ 94/327(479.243) Քաղաքագիտություն

ԱՐՑԱԽԻ ԱՐՏԱՔԻՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Աշոտ ՂՈՒԼՅԱՆ

Բանալի բառեր՝ *Ղարաբաղյան շարժում, արտաքին շփումներ, ԼՂԻՄ, ՀԽՍՀ, ԱդրԽՍՀ, ԽՍՀՄ, մարզխորհուրդ, ԽՄԿԿ Կենտկոմ, ստորագրահավաք, ցույցեր, վերամիավորում, ԼՂ Ազգային խորհուրդ:*

Ключевые слова *- Карабахское движение, внешние контакты, НКАО, Армянская ССР, Азербайджанская ССР, СССР, облсовет, ЦК КПСС, сбор подписей, демонстрации, воссоединение, Национальный совет НК.*

Keywords *– Karabakh movement, foriegn ties, NKAO, ASSR, AzSSR, USSR, regional council, CPSU Central Committee, signiature collection, demonstrations, reunification, NK National Council.*

ВНЕШНИЕ КОНТАКТЫ АРЦАХА НА ЭТАПЕ РАЗВИТИЯ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ

А.ГУЛЯН

В рамках данной статьи представлены внешние контакты Арцаха параллельно с институциональным развитием Карабахского движения, которые в основном велись с союзным центром, властями АССР и Азербайджанской ССР. Соблюдая хронологическую последовательность, рассматриваются постановления относительно Арцаха, принятые руководством СССР, Армянской ССР и Азербайджанской ССР.

THE ARTSAKH FOREIGN TIES IN THE PERIOD OF DEVELOPMENT OF KARABAKH MOVEMENT

A.GHULYAN

The article presents the Artsakh foreign ties carried out mainly with the central government of the Soviet Union, the authorities of Armenian SSR and Azerbaijani SSR in the period of intitutional development of Karabakh movement. Following the chronological order the article touches upon the decisions on Artsakh made by the USSR, ArmSSR, and AzSSR leadership.

Սույն հոդվածի շրջանակներում ներկայացվել են Ղարաբաղյան շարժման ինստիտուցիոնալ զարգացմանը զուգընթաց Արցախի արտաքին շփումները, որոնք հիմնականում վարվում էին միութենական կենտրոնի, ՀԽՍՀ և ԱդրԽՍՀ իշխանությունների հետ: Պահպանելով ժամանակագրական հաջորդականությունը՝ անդրադարձ է կատարվել Արցախի վերաբերյալ ԽՍՀՄ, ՀԽՍՀ և ԱդրԽՍՀ ղեկավարության ընդունած որոշումներին:

Աշխարհաքաղաքական լուրջ վերադասավորումների ժամանակահատվածում երբեմն ընդունվում են որոշումներ, որոնք հիմնովին վերափոխում են ժողովուրդների կյանքի ընթացքը: Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ ժողովրդի համար այդպիսի «լուծում» դարձավ Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության Կովկասի բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը, որով բավարարվեցին նորահռչակ խորհրդային Ադրբեջանի հավակնությունները պատմական հայկական տարածքի՝ Արցախի հանդեպ:

Խորհրդային պետության գոյության ընթացքում Արցախի հայությունը երբևէ չի հաշտվել երկրամասի՝ ԱդրԽՍՀ կազմում գտնվելու իրողության հետ, և ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև մշտապես բարձրացրել է այն ՀԽՍՀ կազմ վերադարձնելու հարցը՝ դրանով իսկ պարբերաբար վերահաստատելով Ղարաբաղյան հիմնախնդրի առկայությունը:

Հարցը քաղաքական օրակարգ մտցնելու հերթական փորձը կապված է ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի պաշտոնին Միխայիլ Գորբաչովի նշանակման և երկրում արմատական բարեփոխումների՝ «վերակառուցման» քաղաքականության որդեգրման հետ:

ժողովրդավարացման հռչակված ուղեգիծը ԼՂԻՄ և ՀԽՍՀ հանրության շրջանում հույսեր արթնացրեց Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի կարգավորման վերաբերյալ:

Ղարաբաղյան շարժումը ոչ միայն դարձավ ազգային-ազատագրական պայքարի առաջին դասական օրինակը փոփոխությունների ճանապարհ ընտրած խորհրդային տերության տարածքում, այլև նախադեպ ստեղծեց ինքնավար կազմավորումների կարգավիճակում արտաքին քաղաքական հարաբերությունների և կապերի հաստատման առաջին զգուշավոր փորձերի համար:

1987թ. երկրորդ կեսին և 1988թ. առաջին ամիսներին երկրամասի հիմնարկ-ձեռնարկությունների և կոլեկտիվների մեծամասնությունում տեղի են ունեցել համապատասխան ժողովներ, անց է կացվել ՀԽՍՀ-ի հետ վերամիավորման պահանջով հերթական ստորագրահավաք[1]: Հիշյալ որոշումները սահմանված կարգով ուղղվել են համապատասխան վերադաս մարմիններին՝ ԿԿ ԼՂԻՄ շրջանային կոմիտեներին[2]:

1987 թ. դեկտեմբերին Ղարաբաղի հայերի պատվիրակությունը Մոսկվայում կոմկուսի Կենտկոմի ընդունարան է տեղափոխել ստորագրությունները, նամակներն ու պահանջագրերը: Ըստ տարբեր աղբյուրների՝ խոսքը շուրջ 80 հազար ստորագրության մասին էր[3]: 1988 թվականի հունվարին Մոսկվա է մեկնել ԼՂԻՄ հայերի նոր պատվիրակություն, որն իր հետ տարել է ոչ միայն արցախցիների դիմումները, այլև Լեռնային Ղարաբաղի պատմությանը, ազգագրությանը, տնտեսությանն ու մշակույթին նվիրված 84 փաստաթուղթ: Պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Մեկ այլ պատվիրակություն 1988 փետրվարի սկզբին Մոսկվայում հանդիպում է ունեցել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Անդրեյ Գրոմիկոյի հետ:

1988թ. փետրվար-մարտ ամիսներին ԼՂԻՄ-ում սկիզբ առած շարժումն ինստիտուցիոնալ զարգացման սկզբնական փուլում էր: Փետրվարի սկզբին մարզում նկատվող տրամադրությունների վերելքին Ադրբեջանի կուսակցական վերնախավը փորձեց հակադրել «սպառնալից խորհրդատվությունների» աշխատառճը, ինչը բնական դիմադրության հանդիպեց Մարզի կուսակցական-վարչական ընտրախավի կողմից: Ստեփանակերտի քաղաքային և Մարտունու, Ասկերանի ու Հադրութի շրջանային կուսակցական կազմակերպությունների ժողովներում Ադրբեջանի հանրապետական կառույցի գործիչների՝ հանրային ակտիվությունը ամեն կերպ ճնշելու համառ ցանկությունը հանդիպեց ինքնուրույնությունը հաստատող և կամայականություն թույլ չտալու վճռական ու ինքնաբուխ ելույթների, և շատ արագ այդ լուրերը տարածվեցին Արցախի բոլոր բնակավայրերում:

Փետրվարի 13-ին Ստեփանակերտ քաղաքի կենտրոնական հրապարակում կայացավ առաջին հանրահավաքը՝ Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման պահանջով (հանրահավաքի հիմնական կազմակերպիչները Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի և գյուղատնտեսական տեխնիկումի ուսանողներն էին) [4]: Հաշված օրերի ընթացքում տեղերից համալրվող ջանքերով տարերային բողոքի ակցիաներից ձևավորվում են համաժողովրդական շարժման նախադրյալները. հրավիրվում են ժողպատգամավորների քաղաքային և շրջանային խորհուրդների նիստեր, որոնք որոշումներ են ընդունում երկրամասի

---

[1]Տե՛ս **Зверев Алексей,** Этнические конфликты на Кавказе, 1988-1994 г. в сборнике «Спорные границы на Кавказе», под ред. Бруно Копиетерса (*ContestedBorders in the Caucasus, by Bruno Coppieters (ed.)*), *1996, VUB University Press,*http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/contents.htm, (06.06.12)

[2]Нагорный Карабах – Историческая справка, Академия наук Армянской ССР, Издательство АН Армянской ССР, Ред.: **Галоян Г. А., Худавердян К. С.** Ер., 1988, эл. версия: http://www.karabah-88.ru/history/karabah/34.html

[3]Տե՛ս, **Воеводский, Константин.** Перестройка в Карабахском зеркале (Опыт сравнительного анализа), Исход азербайджанцев из Армении: миф и реальность, Журнал «Pro Armenia» N 1, 1993,http://www.sumgait.info/press/pro-armenia-magazine/pro-armenia-9301.htm:**Зверев, Алексей.** Ук. соч.

[4]**Том де Ваал. Глава 1. Февраль 1988 года** (рус.), Русская служба Би-би-си (03 июля 2005 г.).http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_4640000/4640183.stm

ապագան մարզի բարձրագույն ներկայացուցչական մարմնի նիստում քննարկելու առաջարկներով: 1988թ. փետրվարի 20-ին 87 պատգամավորի պահանջով գումարվում է ԼՂԻՄ Մարզխորհրդի արտահերթ նիստ, որին 150 պատգամավորներից մասնակցում են 111-ը (ազգությամբ ադրբեջանցի պատգամավորները նիստին չեն մասնակցում), ովքեր էլ միաձայն ընդունում են աննախադեպ որոշում՝ սկիզբ դնելով ԱդրԽՍՀ կազմից ԼՂԻՄ-ի դուրս գալու իրավական գործընթացին:

Ի տարբերություն Ղարաբաղյան հիմնախնդրի ակտիվացման նախկին փուլերի հարցադրումների՝ փետրվարի 20-ին ընդունված փաստաթուղթը ենթադրում էր հիմնախնդրի կարգավորում ԽՍՀՄ Սահմանադրության շրջանակներում: Կարգավորման սուբյեկտներ են հռչակվում Մարզխորհուրդը, ՀԽՍՀ-ն, ԱդրԽՍՀ-ն, ինչպես նաև խորհրդային կենտրոնական իշխանությունները՝ ի դեմս ԽՍՀՄ Գերագույն խորհրդի:

Քաղաքական գործընթացի սահմանադրական կարգավորման հնարավորությունը ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների դիրքորոշման համայնապատկերի վրա խախտվեց Ադրբեջանի կողմից ձեռնարկված սադրանքների և ԱդրԽՍՀ հայության ահաբեկմանն ուղղված գործողությունների արդյունքում[1]: Սումգայիթյան ոճրագործությունը լրջորեն ազդեց Ղարաբաղյան հիմնախնդրում միութենական կենտրոնից հայաստանյան եւ ղարաբաղյան հասարակության ունեցած սպասումների վրա: Փետրվարի 29-ին տեղի ունեցավ ԽՄԿԿ կոմկուսի Քաղբյուրոյի նիստ, որի օրակարգում էր «Ադրբեջանական եւ Հայկական ԽՍՀ-ում իրադարձությունների կապակցությամբ լրացուցիչ միջոցների մասին հարցը»[2]: Կուսակցության վերնախավը որոշեց թաքցնել սումգայիթյան իրադարձությունների բնույթն ու մասշտաբները, ԽՍՀՄ Գլխավոր դատախազությունը հերքեց հայերի զանգվածային սպանությունների նախապատրաստված լինելու իրողությունը, իսկ ջարդերի անաչառ քննություն անցկացնելու ԽՄԿԿ Կենտկոմին ուղղված բազմաթիվ դիմումներն անպատասխան մնացին: Կոմկուսի ԼՂԻՄ մարզային կառույցը հրաժարվեց ընդունել կուսակցության ղեկավար մարմնի՝ Քաղբյուրոյի որոշումն ու 1988-ի մարտի 17-ին Ստեփանակերտում գումարելով մարզային կուսակցական կոմիտեի պլենում՝ իր աջակցությունը հայտնեց ԼՂԻՄ բնակչության՝ Մարզը Հայաստանի հետ միավորելու պահանջներին[3]:

Մարտի 1-ի լույս 2-ի գիշերը մարզկենտրոնում ստեղծվեց «ԼՂԻՄ-ի՝ Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորման կոմիտեն», որը միավորել էր առաջին համաժողովրդական հանրահավաքներում աչքի ընկած ակտիվիստներին, մտավորականներին, ինչպես նաև արդյունաբերական և տրանսպորտային ձեռնարկությունների ու հաստատությունների տնօրեններին: Մարտի 5-ին Ստեփանակերտի ժողպատգամավորների քաղաքային խորհուրդն իր որոշումով գրանցեց «Կռունկ» ՀԿ-ն՝ օրինականացնելով «ՀԽՍՀ-ի հետ միավորման ԼՂԻՄ կոմիտեն»[4]: Նույն ժամանակահատվածում՝ 1988 թ. մարտի 2-ին, Երևանում ձևավորվեց «Ղարաբաղ» կոմիտեն:

---

[1]Հիշյալ իրադարձությունները ցույց տվեցին, որ ԼՂԻՄ և ՀԽՍՀ քաղաքական ղեկավարությունը պատրաստ չէր իրենց որդեգրած քաղաքական դիրքորոշման նկատմամբ թե՛ ԱդրԽՍՀ, թե՛ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների արձագանքին / Տե՛ս «Левон Тер-Петросян: Урегулировать карабахский конфликт в 1997 году не позволили амбиции карабахцев», ИА REGNUM, 18.04.11, http://regnum.ru/news/1396150.html: Առկա էին նաեւ տարաձայնություններ հայկական կողմերի մոտեցումներում: Այսպես՝ Հայաստանի ԿԿ կենտկոմի I քարտուղար Կ. Դեմիրճյանը, ելույթ ունենալով փետրվարի 22-ին ՀԽՍՀ հանրապետական հեռուստատեսությամբ, նշել է, որ «վերամիավորման պահանջը չի կարող բավարարվել»/ **Том де Ваал. Глава 1. Февраль 1988 года**, Русская служба Би-би-си (03 июля 2005 г.).
http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_4640000/4640183.stm

[2]Տե՛ս: Полный текст стенограммы секретного заседания Политбюро ЦК КПСС 29 февраля 1988 года. **«О дополнительных мерах в связи с событиями в Азербайджанской и Армянской ССР»** (01.11.11) http://www.sumgait.info/sumgait/politburo-meeting-29-february-1988.htm

[3] Газ. «Советский Карабах» (Степанакерт), 18.03.88.

[4]"Хроника НКАО февраль 1988- февраль 1990", Баку, 1990 , с. 7.

ԽՍՀՄ իշխանությունների դիրքորոշումը Ղարաբաղյան հարցում իր իրավաքաղաքական ամրագրումը ստացավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. մարտի 23-ին ընդունած որոշմամբ, որն անթույլատրելի էր համարում ԽՍՀՄ Սահմանադրության մեջ ամրագրած ազգային-պետական և ազգային-վարչական սահմանների վերաձևումը[1]: Որոշմամբ արգելվեց Մարզում հասարակական կազմակերպությունների գործունեությունը, որի արդյունքում Ղարաբաղյան շարժման ղեկավարումը կենտրոնացավ կոմկուսի ԼՂԻՄ մարզկոմիտեի քարտուղար Հենրիխ Պողոսյանի ձեռքում՝ դրանով իսկ շարժման մեջ ներգրավելով Մարզխորհուրդն ու կոմկուսի մարզային կազմակերպությունը: Հաջորդ օրը ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի «ԱդրԽՍՀ ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման արագացման վերաբերյալ» որոշումը[2]: Դիտարկելով Ղարաբաղյան հիմնախնդրի ծագումը բացառապես սոցիալ-տնտեսական դրդապատճառների համատեքստում՝ այն ենթադրում էր ԼՂԻՄ տնտեսության որոշ սեկտորների զարգացման և նյութատեխնիկական հագեցման, ենթակառուցվածքների և կոմունիկացիաների զարգացմանն ուղղված քայլերի իրականացում[3]:

Հունիսի 15-ին Հայաստանի իշխանությունները նոր քայլ կատարեցին՝ ընդառաջ գնալով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության կամարտահայտությանը. ՀԽՍՀ ԳԽ-ն ընդունեց որոշում, որով Երևանն իր համաձայնությունը տվեց Մարզի՝ ՀԽՍՀ կազմի մեջ մտնելու ցանկությանը, և դիմում ԽՍՀՄ ԳԽ-ին՝ հարցի դրական լուծմանը միջնորդելու խնդրանքով[4]:

Զարգացնելով որդեգրված քաղաքական գիծը՝ ԼՂԻՄ իշխանությունները հունիսի 21-ին՝ ՀԽՍՀ և ԱդրԽՍՀ պաշտոնական մոտեցումների հրապարակումից հետո, ընդունեցին «Մարզում ստեղծված իրավիճակի և դրա կայունացման վերաբերյալ» որոշում[5], որը, մերժելով Ադրբեջանի իշխանական մարմինների կողմից ընդունված որոշումները, վերստին դիմում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ «...ՀԽՍՀ ԳԽ հունիսի 15-ի որոշումն ուսումնասիրելու եւ դրական լուծում տալու խնդրանքով»[6]: Իբրև միջանկյալ լուծում՝ փաստաթուղթն առաջարկում էր. «մինչև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական և դրական լուծման իրականացումը հնարավորինս կարճ ժամկետում Մարզը դնել ԽՍՀՄ Կառավարության ենթակայության տակ»[7]:

Ստանալով միութենական կենտրոնից ակնկալվող լուծումներ՝ 1988թ. հուլիսի 12-ին ԼՂԻՄ ժողովրդամավորների Մարզխորհրդի նստաշրջանն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ ԱդրԽՍՀ կազմից դուրս գալը հռչակելու մասին» որոշում, որում արցախյան իշխանություններն արդեն հղում էին կատարում ազգերի ինքնորոշման

---

[1]«Постановление Президиума Верховного Совета СССР о мерах, связанных с обращениями Союзных республик по поводу событий в Нагорном Карабахе, в Азербайджанской и Армянской ССР», газ. «Бакинский рабочий», (Баку), 24.03.88.; Бобков Ф. Д. КГБ и власть. М. Изд-во Эксмо, 2003. — 416 с.

[2]Տե՛ս. Доронченков А. И. (сост.), «К Союзу Суверенных Народов»/ Сборник документов КПСС, законодательных актов, деклараций, обращений и президентских указов, посвященных проблеме национально-государственного суверенитета, Составитель: Доронченков А. И., Институт теории и истории социализма ЦК КПСС. Москва, 1991, сс. 307–317,http://soveticus5.narod.ru/85/sborn91.htm(08.01.13).

[3]ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 13, д. 384 л. 66, ссылка по **Товмасян В. А., Атаджанян В. А., Нерсесян Ю. Б.** Ук. соч., сс. 47-48.

[4] Постановление Верховного Совета Армянской ССР о Решении внеочередной Сессии Областного Совета народных депутатов НКАО Азербайджанской ССР от 20 февраля 1988 года «О ходатайстве перед Верховными Советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче Нагорно-Карабахской Автономной Области из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР», Ереван, I5 июня 1988 г., Газ. «Коммунист» (Ереван), 16.06.88.

[5] Решение внеочередной Сессии Совета народных депутатов НКАО 20-го созыва «О сложившейся в Области обстановке и мерах по ее стабилизации», Степанакерт, 21.06.88, газ. «Советский Карабах», (Степанакерт), 23.06.88.

[6] Газ. «Советский Карабах», (Степанакерт), 23.06.88.

[7]Նույնտեղում:

իրավունքին[1]: Փաստաթուղթը մատնանշում էր ԼՂԻՄ-ի բոլոր տեսակի կապերի խզվածությունն Ադրբեջանի հետ ու իբրև միակ ընդունելի լուծում սահմանում ՀԽՍՀ ԳԽ՝ 1988թ. հունիսի 15-ի որոշումների իրականացումը: Միաժամանակ ԼՂ Մարզխորհրդի գործադիր կոմիտեին հանձնարարվում էր ընթացք տալ ԼՂԻՄ-ի՝ «Արցախյան ինքնավար մարզի» վերանվանման գործընթացին[2]:

Մարզն Ադրբեջանի վերահսկողությունից դուրս բերելու և կենտրոնական իշխանությունների հսկողության տակ դնելու հայեցակարգն ամրագրվեց ԽՍՀՄ ԳԽ նախագահության՝ ԼՂԻՄ-ում Արկադի Վոլսկու գլխավորությամբ Հատուկ կառավարման կոմիտե ստեղծելու 1989թ. հունվարի 12-ի որոշման մեջ: Որոշումը ձևականորեն Մարզը թողնում է ԱդրԽՍՀ կազմում, սակայն միաժամանակ արմատապես վերափոխում ԼՂԻՄ իշխանական և կառավարման համակարգը՝ լիազորություններից զրկելով Մարզխորհրդին ու վերջինիս գործադիր կոմիտեին, վերահսկողություն հաստատում իշխանության տեղական բոլոր մարմինների և ՀԿ-ների, անգամ արտադրական կոլեկտիվների վրա[3]:

Հատուկ կառավարման կոմիտեին լայն լիազորություններով օժտելը, ընդհանուր առմամբ, նպատակ ուներ վերացնելու Շարժման ինստիտուցիոնալ կազմակերպվածության հնարավորությունները: Մարզում իշխանության օրինական մարմինների բացակայության պայմաններում քննարկվում էր համաղարաբաղյան միասնական կառույցի ձևավորման անհրաժեշտության հարցը[4]: Ի վերջո, 1989թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում կայանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի լիազոր ներկայացուցիչների (թվով 334) համագումար, որին մասնակցում են նաև ԼՂԻՄ-ի կազմի մեջ չմտնող Շահումյանի շրջանի պատվիրակության անդամները[5]:

Ազգային խորհուրդն ու նրա նախագահությունը, կողմ արտահայտվելով կենտրոնական իշխանությունների հայտարարած վերակառուցմանը, հրապարակայնությանը և ժողովրդավարացմանը, միաժամանակ հայտարարեցին Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու վճռականության մասին: Համագումարը ողջունեց Շահումյանի շրջանի (ներառյալ Գետաշենի ենթաշրջանի) պատգամավորների շրջխորհրդի 1989թ. հուլիսի 26-ի արտահերթ համագումարի հայցն ԱդրԽՍՀ ԳԽ-ին՝ շրջանը ԼՂԻՄ կազմի մեջ ներառելու մասին[6]:

Ընդունված հռչակագրի համաձայն՝ ԼՂԻՄ-ը հայտարարվում է «անկախ միութենական տարածք», Մարզի տարածքում դադարեցվում է ԱդրԽՍՀ Սահմանադրության, ԼՂԻՄ-ի մասին ԱդրԽՍՀ և հանրապետական այլ օրենքների

---

[1] Տե՛ս Решение Восьмой сессии Совета народных депутатов НКАО 20-го созыва «О провозглашении выхода Нагорно-Карабахской Автономной Области из состава Азербайджанской ССР», Степанакерт, 12 июля 1988 г., газ. «Советский Карабах» (Степанакерт), 13.07.88.

[2] Տես՛ նույն տեղում:

[3] Տե՛ս Указ Президиума Верховного Совета СССР «О введении особой формы управления в Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР», 12 января 1989 г., Ведомости Верховного Совета ССР, Москва, № 3, 1989 г., с. 14., газ. «Правда», (Москва), 12.01.89.

[4] Արցախյան իրողությունների յուրահատկությունը, այնուամենայնիվ, այն էր, որ եթե Հայաստանում և Ադրբեջանում իշխանության այլընտրանքային բևեռների կազմավորումն ընթանում էր իշխանության հանրապետական մարմինների գործունեության պայմաններում, ապա ԼՂ-ում հասարակական-քաղաքական շրջանակները հանգել էին միասնական՝ թե՛ հասարակական-քաղաքական և թե՛ իշխանության տեղական մարմինների ներկայացուցիչներին ներառող կառույցի ստեղծման գաղափարին/ **Саркисян, Манвел.** Нагорный Карабах: война и политика (1990–93 гг.). Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в армянском обществе. Ер., Армянский центр стратегических и национальных исследований, 2010, с. 21. Հասարակական-քաղաքական վերնախավերի փոփոխման գործընթացը, որի ժամանակ ազգային կուսակցական բյուրոկրատիայի ներկայացուցիչներն իրենց տեղն էին զիջում ոչ իշխանական շրջանակների ներկայացուցիչներին, առկա էր թե՛ Ադրբեջանում, թե՛ Հայաստանում: Այսպես՝ 1989 թ. հունիսի 16-ին Բաքվում ստեղծվել էր Ադրբեջանի ժողովրդական ճակատը՝ Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ: Իր հերթին Հայաստանում գնալով մեծանում էր «Ղարաբաղ» կոմիտեի հեղինակությունը, որի անդամներին կալանավայրերից ազատ էին արձակել մայիսի վերջին:

[5] **Տե՛ս** “Хроника НКАО февраль 1988- февраль 1990”, Баку, 1990 , с. 19.

[6] Տե՛ս **Միսյան Բ. Խ., Չիլինգարյան Ռ. Վ.,** Գետաշեն, Եր., Գասպրինտ, 2007, էջ 324-327:

գործունեությունը: Միաժամանակ փաստաթուղթը դիմում է ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդներին՝ խնդրելով ճանաչել Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը իբրև ԼՂԻՄ-ում միակ ժողովրդական իշխանություն, և «աշխարհի ժողովրդավարական երկրների կառավարություններին ու ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին»՝ խնդրելով սատարել Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչության՝ «ինքնորոշման և անկախության իղձերին» [1]:

Ազգային խորհուրդը ՀԽՍՀ ԳԽ-ի կողմից պաշտոնապես ճանաչվեց 1989թ. սեպտեմբերի 17-ի՝ «ԼՂԻՄ հիմնախնդրի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ ներկայացվելիք առաջարկությունների մասին» որոշումով[2]: Ընդունված փաստաթղթով Հայաստանի ԳԽ-ն դիմում է միութենական իշխանություններին՝ խնդրելով ճանաչել Մարզխորհրդի՝ փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի որոշումներով արտահայտած ԼՂԻՄ ինքնորոշման իրավունքը և չեղյալ հայտարարել ԼՂ-ն Ադրբեջանի կազմի մեջ ներառելու մասին ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը: Պետք է ստեղծվեր ՀԽՍՀ ԳԽ հատուկ հանձնաժողով ԼՂ-ի՝ Ադրբեջանի կազմում հայտնվելու պետահիրավական հիմքերը վերանայելու օրակարգով՝ «1920–1921թթ. ապօրինաբար և միջազգային իրավունքի նորմերի կոպտագույն խախտումներով ընդունված պայմանագրերի և որոշումների ուսումնասիրման համար»[3]:

ԽՍՀՄ ԳԽ-ի 1989թ. նոյեմբերի 28–ի որոշմամբ Ա. Վոլսկու ՀԿԿ-ն լուծարվեց. վերջինիս գործառույթները պետք է անցնեին ԼՂԻՄ-ի հետ համահավասարության սկզբունքով ստեղծվելիք Հանրապետական կազմկոմիտեին և իշխանության վերականգնվող տեղական մարմիններին՝ ԼՂԻՄ Մարզխորհրդին և վերջինիս գործադիր կոմիտեին: Նախատեսվում էր «ԼՂԻՄ կարգավիճակի մասին» նոր օրենքի մշակում և ընդունում՝ ԼՂ-ի «լիարժեք զարգացումը պետական, տնտեսական և մշակութային շինարարության ոլորտում՝ հիմնված ինքնակառավարման, ինքնաֆինանսավորման, տնտեսական և մշակութային կապերի ազատության հիման վրա»[4]: Մարզում տեղակայված ԽՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումների ղեկավարումն իրականացնելու էր միութենական ԳԽ-ին ենթակա նոր ստեղծվող Միութենական վերահսկիչ-դիտորդական հանձնաժողովը: ԼՂԻՄ-ի ապաշրջափակման հետ մեկտեղ որոշումը միութենական, հանրապետական և մարզային իշխանություններից պահանջում էր քայլեր ձեռնարկել՝ երկրամասում ձևավորված էթնիկական կազմի փոփոխում թույլ չտալու նպատակով[5]:

---

[1] Տե՛ս Декларация Съезда полномочных представителей населения Нагорного Карабаха, газ. «Советский Карабах», N 187 (2317), 19.08.89.

[2] Տե՛ս «Постановление Верховного Совета Армянской ССР о предложениях, вносимых в Верховный Совет СССР по решению проблемы НКАО».

[3] Հետագայում 1990 թ-ի փետրվարի 13-ին ՀԽՍՀ ԳԽ-ի ընդունված որոշումն անվավեր, ապօրինի և միջազգային իրավունքին հակասող է հռչակում ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի՝ Ղարաբաղի վերաբերյալ 1921 թ-ի հուլիսի 5-ի որոշումը, որով «ոտնահարվել է Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքը, բռնազավթվել է ՀԽՍՀ տարածքի մի մասը, և հայ ժողովուրդը բաժանվել է երկու մասի»: Իր դիրքորոշման մեջ ՀԽՍՀ ԳԽ–ն հիմնվում էր ոչ միայն խորհրդային պետության իրավաքաղաքական ակտերի, այլեւ ազգերի ինքնորոշման իրավունքի վրա (Տես մանրամասն. Գազ. «Коммунист» (Ереван), № 40, 17.02.90):

[4] Տե՛ս: «Постановление Верховного Совета СССР о мерах по нормализации обстановки в НКАО», http://ankakhutyun.am/archives/8337

[5] Ադրբեջանի ԿԿ կենտկոմի II քարտուղար Վ. Պոլյանիչկոյի գլխավորած Հանրապետական կազմկոմիտեն /ՀԿԿ/ ձեւավորվել էր ԱդրԽՍՀ ԳԽ նախագահության 1989 թ-ի դեկտեմբերի 4-ի հրամանագրով: Դրա ստեղծումով Բաքուն, ղեկավարվելով «Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ինքնիշխանության մասին» ԱդրԽՍՀ օրենքի դրույթներով եւ տրամաբանությամբ մասամբ է կյանքի կոչել ԽՍՀՄ ԳԽ 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը: Նախ՝ ՀԿԿ-ի մեջ չեն ընդգրկվել ԼՂԻՄ ներկայացուցիչները, ԼՂԻՄ Մարզխորհրդի գործունեությունը չի վերականգնվել, քայլեր չեն ձեռնարկվել Մարզի իրական ինքնավարության բարձրացման, օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքների եւ անվտանգության ապահովման ուղղությամբ եւ այլն: ԼՂԻՄ իշխանությունները հրաժարվել են ճանաչել ՀԿԿ-ն եւ հայտարարել Մարզխորհրդի գործունեության վերականգնման մասին, ինչը միութենական կենտրոնի հանդուրժողականության պայմաններում ԼՂԻՄ-ում առաջ է բերել փաստացի երկիշխանություն: /Տես. **Кривопусков В. В.** Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное. М.: «Голос-Пресс», 2007, сс. 52-53

1988-1989 թվականներին, դարաբաղյան շարժման թափ հավաքելուն զուգընթաց, արևմտյան կենտրոններում սկսեցին ուշադրություն դարձնել Խորհրդային Միությունում տեղի ունեցող իրադարձություններին, ինչն արտահայտվեց այդ առթիվ ընդունված բանաձևերի միջոցով:

1988 թվականի հուլիսին ընդունված «Իրավիճակը Սովետական Հայաստանում» բանաձևով Եվրոպական խորհրդարանը դատապարտեց ԱրդԽՍՀ տարածքում հայ ժողովրդի դեմ կիրառված բռնությունները և աջակցություն հայտնեց ՀԽՍՀ-ին միանալու Ղարաբաղի հայության պահանջին՝ հաշվի առնելով ԼՂԻՄ-ի պատմական կարգավիճակը որպես Հայաստանի անբաժանելի մաս, տարածաշրջանի կամայական բռնակցումը խորհրդային Ադրբեջանին և 1988 թվականին ադրբեջանական Սումգայիթ քաղաքում հայերի ջարդերը: Միաժամանակ ԵՄ խորհրդարանը կոչ արեց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդին՝ հաշվի առնելու հայ պատվիրակների առաջարկները՝ Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես Մոսկվայի կենտրոնական իշխանությունների կառավարման տակ դնելու, ժամանակավոր միավորելու Ռուսաստանի Դաշնությանը կամ երկրամասում ժամանակավորապես հաստատելու տարածաշրջանային նախագահական կառավարում[1]:

1989 թվականի հուլիսի 19-ին ԱՄՆ Սենատը ընդունել է «ԱՄՆ աջակցությունը Սովետական Հայաստանի ժողովրդի կամքով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը» բանաձևը[2], ավելի ուշ՝ նոյեմբերի 19-ին, Սենատը իր №178 բանաձևով[3] աջակցություն է հայտնել Ղարաբաղյան հակամարտության արդարացի լուծմանը:

ԼՂԻՄ-ից խորհրդային տիպի պետականության կարգավիճակն աստիճանաբար խլելու քաղաքանությունը կասեցնելու նպատակով 1989թ. դեկտեմբերի 1-ին Երևանում ընդունվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂ Ազգային խորհրդի համատեղ որոշումը՝ ՀԽՍՀ-ն և ԼՂ-ն «միասնական պետական-քաղաքական համակարգի» մեջ միավորելու մասին, ըստ որի՝ ԼՂ բնակչության վրա տարածվում էին ՀԽՍՀ քաղաքացիների իրավունքները: Որոշումը թեև անորոշ ձևակերպումներ էր պարունակում Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայկական բնակչության ազգային շահերը ներկայացնելու մասին, այնուամենայնիվ, ընդարձակում էր Ղարաբաղյան հիմնախնդրի աշխարհագրական սահմանները ԼՂԻՄ վարչական սահմաններից դուրս[4]: Միացումի շրջանակներում ԼՂԻՄ-ի 1990 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը ՀԽՍՀ ԳԽ-ը 1990թ. հունվարի 9-ի որոշմամբ ներառվեց ՀԽՍՀ տնտեսական եւ սոցիալական զարգացման 1990 թվականի պետական ծրագրի մեջ:

Հիշյալ որոշումները բացասական արձագանք ստացան միութենական կենտրոնի կողմից: 1990թ. հունվարի 10-ի ԽՍՀՄ ԳԽ նախագահությունն իր որոշմամբ անօրինական համարեց ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի վերամիավորումը՝ «առանց Ադրբեջանի համաձայնության»: «Հակասահմանադրական» հռչակվեց ԼՂ Ազգային խորհուրդը, ինչպես նաև վերջինիս ճանաչումը ՀԽՍՀ-ի կողմից՝ իբրև մարզում միակ օրինական իշխանություն[5]: ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը հակասահմանադրական որակեց նաև ԱդրԽՍՀ ԳԽ-ի 1989 դեկտեմբերի 4-ի «ԱդրԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրավիճակի կայունացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ» ԽՍՀՄ ԳԽ 1989 թ-ի նոյեմբերի 28-ի որոշման թիվ 3,

[1] The European Parliament Resolution on the Situation in Soviet Armenia (July 1988)

[2] US Senate Resolution on the US assistance in peaceful regulation of the Nagorno Karabagh dispute at the basis of the desire of the people of the Soviet Armenia (July 19, 1989)

[3] The US Senate Joint Resolution (S.J. Res. 178) (November 19, 1989)

[4] Տե՛ս. «Постановления Верховного Совета Армянской ССР и Национального Совета Нагорного Карабаха о воссоединении Армянской ССР и НК», газ. «Политехник», № 38-40 (1155-1157), 12.12.89.

[5] Газ. «Правда» (Москва), 11 января 1990, տրված է ըստ «К Союзу Суверенных Народов», сс. 349–350

4, 6 և 7 կետերի որոշ դրույթների կասեցումը[1]: Թե՛ Երևանը, թե՛ Բաքուն պետք է իրավական ակտերը համապատասխանեցնեին ԽՍՀՄ Սահմանադրության պահանջներին:

Միութենական իշխանությունների պահանջները մերժվեցին թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի կողմից: Ավելին, Բաքվում խորհրդային իշխանությունների ճգնաժամի ֆոնի վրա[2], 1990 թ. հունվարի 13-ին ԱդրԽՍՀ ԳԽ նախագահությունը ԼՂԻՄ-ում հայտարարեց արտակարգ դրություն՝ դիմելով և ստանալով աջակցություն ԽՍՀՄ ՊՆ, իրավապահ եւ միութենական գործադիր այլ մարմիններից[3]: 1990թ. հունվարի 15-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը հաստատեց Մ.Գորբաչովի՝ «ԼՂԻՄ-ում և որոշ այլ շրջաններում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» հրամանագիրը: Ստեղծվեց Արտակարգ դրության շրջանի պարետատուն: Հանրապետական կազմկոմիտեն իրավունք ստացավ ամբողջությամբ արգելելու հասարակական-քաղաքական կյանքը ԼՂԻՄ-ում, մտցնելու պարետային ժամ, սահմանափակելու տեղաշարժի իրավունքը, սահմանելու «անձնագրային ռեժիմ» և ժամանակավորապես տեղահանելու մարդկանց՝ գործադրելով Խորհրդային բանակի, Ռազմածովային ուժերի և ՊԱԿ-ի ուժերը: Հրամանագիրը Հայաստանից պահանջում էր խոչընդոտել իր տարածքի օգտագործումն ազգամիջյան կրքերը բորբոքող և երկու ժողովրդների միջև ազգային թշնամանք սերմանող գործողությունների համար[4]:

Գնալով հսկողության խստացմանը ԼՂԻՄ-ում և հայ-ադրբեջանական սահմանագծի երկայնքով՝ միութենական իշխանությունները գործնական քայլեր չձեռնարկեցին Բաքվում հայկական բնակչության անվտանգությունը ապահովելու ուղղությամբ, այլ քաղաքը հանձնեցին Ադրբեջանի ժողճակատի զինյալներին և պատճառ դարձան քաղաքի հայության նոր ջարդերի: Բաքվում խորհրդային կարգերի պահպանման ջանքերի շրջանակում միութենական կենտրոնը հրաժարվեց 1990թ. հունվարի հայկական ջարդերի հետաքննության ծրագրերից:

Բաքվի հայության զանգվածային ջարդերն արձանագրեցին Ղարաբաղյան քաղաքական հիմնախնդրի անդառնալի վերափոխումը լայնածավալ ազգամիջյան հակամարտության՝ «Հայաստան - ԼՂԻՄ - Ադրբեջան» ձևաչափով, որում Մոսկվան փորձում էր խաղալ հաշտարար դատավորի դեր: ԼՂԻՄ բնակչությունը հայտնվել էր սեփական լեգիտիմ իշխանության բացակայության պայմաններում երկրամասից դուրս մղվելու և սպառնալիքների տակ հայտնված անվտանգության հիմնախնդիրների առջև[5]:

Իրավիճակն էլ ավելի բարդացավ նրանով, որ միութենական կենտրոնի՝ Ղարաբաղյան հարցում վարած քաղաքականությունը գնալով ուժեղացրեց հակախորհրդային տրամադրությունները Հայաստանում՝ բացառելով հանրապետության իշխանությունների գործուն մասնակցությունը ԽՍՀՄ հետագա ճակատագրի որոշմանն ուղղված բանակցային գործընթացներին: Պաշտոնական Երևանի որդեգրած

---

[1] Цитата по газ. *«Правда», (Москва), 11.02.90.*

[2] Դեռեւս 1989թ. դեկտեմբերի վերջին Ադրբեջանի Ժողովրդական ճակատը աննախադեպ գործողություններ ծավալեց ԽՍՀՄ՝ Իրանի հետ սահմանի երկայքով, հատկապես՝ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունում՝ ոչնչացնելով սահմանային ենթակառուցվածքներն ավելի քան 700 կմ-ի վրա եւ արձանագրելով սահմանի մասայական խախտումներ բնակչության կողմից (Տե՛ս. **Игнатьев Р**. Погром на советско-иранской границе, «Известия» (Москва), 04.01.90, перепечатано в газ. «Голос Армении» («Коммунист») № 04 (16891), 05.01.90

[3] Постановление Президиума Верховного Совета Азербайджанской ССР о неотложных задачах по нормализации обстановки в НКАО Азербайджанской ССР, г. Баку, 13.01.90

[4] Газ. «Известия» (Москва), № 17 (22920), 16.01.90.

[5] ԽՄ մայրաքաղաքում ընթացող գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալու եւ հայության ազգային շահերը ընթացող գործընթացներում ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունում ԼՂ ուղղությունը համակարգող ՆԳ նախարարի ժ.պ. Աշոտ Մանուչարյանի նախաձեռնությամբ Մոսկվայում ստեղծվում է «վտարանդիության մեջ գտնվող ԼՂ կառավարություն»՝ ԱԳ նախարար Հայկ Քոթանջյան, ԱԱ նախարար Մարիուս Յուզբաշյան եւ Արդարադատության նախարար Յուրի Բարսեղով, կազմով:

քաղաքականության հետևանքով ՀԽՍՀ-ն հրաժարվեց մասնակցելուց թե՛ 1991թ. մարտի 17-ի՝ «Ինքնիշխան Պետությունների Միություն» ձևաչափով ԽՍՀՄ պահպանմանն ուղղված համամիութենական հանրաքվեին, թե՛ դրան հաջորդած Նովոօգարյովյան քաղաքական խորհրդատվությունների գործընթացին:

Հանրաքվեին ցուցաբերած ակտիվ մասնակցությունն[1] ու Միության պահպանման հարցում Ադրբեջանի հետաքրքրվածության դրսևորումները հնարավորություն տվեցին վերջինիս դիմելու Խորհրդային պատժիչ գործողությունների լայնածավալ կիրառմանը ԼՂԻՄ-ի, նրա հարակից շրջանների և Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի հայության դեմ, նախ և առաջ՝ «Օղակ» պատժիչ ռազմագործողության ձևաչափով:

Այսպիսով՝ ուսումնասիրված ժամանակաշրջանում Արցախի արտաքին շփումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ ղարաբաղյան շարժման ընթացքում ԼՂԻՄ իշխանություններն ու շարժումը ղեկավարող մարմինները հարաբերություններ էին պահպանում միութենական կենտրոնի, ՀԽՍՀ և ԱդրԽՍՀ ղեկավարության հետ՝ հիմնականում դիմելով նրանց Արցախը ԱդրԽՍՀ կազմից հանելու և ՀԽՍՀ-ին միավորելու պահանջով: Ուղարկված դիմումներին ի պատասխան՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններն ու խորհրդրային Ադրբեջանի և Հայաստանի ղեկավար մարմինները ընդունում էին համապատասխան որոշումներ՝ կա՛մ **մասամբ** բավարարելով, կա՛մ էլ մերժելով Արցախի ժողովրդի պահանջները:

Խորհրդային ամբողջատիրական պետական համակարգում դժվար էր պատկերացնել, որ ինքնավար մարզի կարգավիճակ ունեցող կազմավորումները կարող էին անարգել արտաքին կապեր ու շփումներ հաստատել օտարերկրյա պետությունների հետ: Ղարաբաղյան շարժումը կոտրեց նաև այս կարծրատիպը. հայկական սփյուռքի առկայությունը աշխարհի շատ երկրներում որոշակի հնարավորություններ ընձեռեց՝ համաժողովրդական պահանջը խորհրդային վարչախմբի մերժողկան դիրքորոշման պայմաններում աստիճանաբար ու դեռևս մեծ զգուշավորությամբ տանելու դեպի աշխարհի մյուս ուժային կենտրոններ և միջազգային կառույցներ՝ սկիզբ դնելով Ղարաբաղյան հիմնախնդիրը միջազգայնացնելու գործընթացին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքեր և հոդվածներ

1. Բ. Խ. Սիսյան, Ռ. Վ. Չիլինգարյան, Գետաշեն, Եր., Գասպրինտ, 2007, էջ 324-327:
2. А. Василевский. «**Туча в горах»,** «Аврора», (Москва), № 10, 1988, http://www.sumgait.info/press/zhurnal-avrora/avrora-october-1988.htm, (27.10.12).
3. **А. Зверев.** Этнические конфликты на Кавказе, 1988-1994 г. в сборнике «Спорные границы на Кавказе», под ред. Бруно Копиетерса (*ContestedBorders in the Caucasus, by Bruno Coppieters (ed.)*), *1996, VUB University Press,* http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/contents.htm, (06.06.12).
4. А. И. Доронченков (сост.), «К Союзу Суверенных Народов»/ Сборник документов КПСС, законодательных актов, деклараций, обращений и президентских указов, посвященных проблеме национально-государственного суверенитета, Институт теории и истории социализма ЦК КПСС. Москва, 1991, сс. 307–317, http://soveticus5.narod.ru/85/sborn91.htm (08.01.13).
5. В. А. Товмасян, В. А Атаджанян, Ю. Б. Нерсесян. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп.13, д. 384 л. 66, ссылка по, Ук. соч., сс. 47-48.
6. В. В. Кривопусков. Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное. М.: «Голос-Пресс», 2007, сс. 52-53.

[1] ԱդրԽՍՀ-ում գրանցված 3.866.659 ընտրողներից հանրաքվեին մասնակցել է 2.903.797 (75,1 %) մարդ, որից 93,3 %-ը (2.709.246) հանդես է եկել ԽՄ պահպանման օգտին: /Տես. Сообщение Центральной комиссии референдума СССР об итогах референдума СССР, состоявшегося 17 марта 1991 года, газ. «Правда» (Москва), 27.03.91

7. Г. А. Галоян, К. С. Худавердян. Нагорный Карабах – Историческая справка, Академия наук Армянской ССР, Издательство АН Армянской ССР, Ред.: Ер. 1988, эл. версия: http://www.karabah-88.ru/history/karabah/34.html.
8. К. Воеводский. Перестройка в Карабахском зеркале (Опыт сравнительного анализа), Исход азербайджанцев из Армении: миф и реальность, Журнал «Pro Armenia» N 1, 1993, http://www.sumgait.info/press/pro-armenia-magazine/pro-armenia-9301.htm.
9. М. Саркисян. Нагорный Карабах: война и политика (1990–93 гг.). Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в армянском обществе. Ер.; Армянский центр стратегических и национальных исследований, 2010, с. 21.
10. Р. Игнатьев. Погром на советско-иранской границе, «Известия» (Москва), 04.01.90, перепечатано в газ. «Голос Армении» («Коммунист») № 04 (16891), 05.01.90.
11. **Том де Ваал.** "Черный сад", **Глава 1. Февраль 1988 года** (рус.), Русская служба Би-би-си (03 июля 2005 г.). http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid 4640000/4640183.stm.
12. "Хроника НКАО февраль 1988- февраль 1990", Баку, 1990, file:///C:/User%20Files/Downloads/kitab20100105021141687.pdf.

Փաստաթղթեր

1. Декларация Съезда полномочных представителей населения Нагорного Карабаха, газ. «Советский Карабах», N187 (2317), 19.08.89.
2. Полный текст стенограммы секретного заседания Политбюро ЦК КПСС 29 февраля 1988 года. **«О дополнительных мерах в связи с событиями в Азербайджанской и Армянской ССР»** (01.11.11) http://www.sumgait.info/sumgait /politburo-meeting-29-february-1988.htm.
3. Постановление Верховного Совета Армянской ССР о предложениях, вносимых в Верховный Совет СССР по решению проблемы НКАО. Газ. «Коммунист» (Ереван), № 40, 17.02.90).
4. Постановление Верховного Совета Армянской ССР о Решении внеочередной Сессии Областного Совета народных депутатов НКАО Азербайджанской ССР от 20 февраля 1988 года «О ходатайстве перед Верховными Советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче Нагорно-Карабахской Автономной Области из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР», Ереван, I5 июня 1988 г., Газ. «Коммунист» (Ереван), 16.06.88
5. Постановление Верховного Совета СССР о мерах по нормализации обстановки в НКАО, http://ankakhutyun.am/archives/8337.
6. Постановление Президиума Верховного Совета Азербайджанской ССР о неотложных задачах по нормализации обстановки в НКАО Азербайджанской ССР, г. Баку, 13.01.90
7. Постановление Президиума Верховного Совета СССР о мерах, связанных с обращениями Союзных республик по поводу событий в Нагорном Карабахе, в Азербайджанской и Армянской ССР, газ. «Бакинский рабочий», (Баку), 24.03.88.; Бобков Ф. Д. КГБ и власть. М. Изд-во Эксмо, 2003. — 416 с.
8. Постановления Верховного Совета Армянской ССР и Национального Совета Нагорного Карабаха о воссоединении Армянской ССР и НК, газ. «Политехник», № 38-40 (1155-1157), 12.12.89.
9. Решение внеочередной Сессии Совета народных депутатов НКАО 20-го созыва «О сложившейся в Области обстановке и мерах по ее стабилизации», Степанакерт, 21.06.88, газ. «Советский Карабах», (Степанакерт), 23.06.88.
10. Решение Восьмой сессии Совета народных депутатов НКАО 20-го созыва «О провозглашении выхода Нагорно-Карабахской Автономной Области из состава Азербайджанской ССР», Степанакерт, 12 июля 1988 г., газ. «Советский Карабах» (Степанакерт), 13.07.88.
11. Сообщение Центральной комиссии референдума СССР об итогах референдума СССР, состоявшегося 17 марта 1991 года, газ. «Правда» (Москва), 27.03.91.
12. Указ Президиума Верховного Совета СССР «О введении особой формы управления в Нагорно-

Карабахской Автономной Области Азербайджанской ССР», 12 января 1989 г., Ведомости Верховного Совета ССР, Москва, № 3, 1989 г., с. 14., газ. «Правда», (Москва), 12.01.89.
13. European Parliament Resolution on the Situation in Soviet Armenia (July 1988).
14. US Senate Resolution on the US assistance in peaceful regulation of the Nagorno Karabagh dispute at the basis of the desire of the people of the Soviet Armenia (July 19, 1989).
15. US Senate Joint Resolution (S.J. Res. 178) (November 19, 1989).

Թերթեր

1. «Советский Карабах», (Степанакерт), 23.06.88.
2. «Правда» (Москва), 11 января 1990, տրված է ըստ «К Союзу Суверенных Народов», сс. 349–350.
3. *«Правда», (Москва), 11.02.90.*
4. «Известия» (Москва), № 17 (22920), 16.01.90.
5. «Советский Карабах» (Степанакерт), 18.03.88.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Աշոտ Ղուլյան - *ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի ավագ դասախոս*
aghoulyan@nankr.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: